

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ:

Տարեկան գինն է 7 օրով (փոստի ծախսով): Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի գինեն այս հասցեով. В. Тифлиса, В. Редакция Армянской Газеты „Мшак“.

Փոխգլխավոր կարելի է օտարաքաղաքացի խմբագրատան մէջ (սրբուհու տուն) և Նիսնայի ընթերցարանում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տալի տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կողմի արժանի: Յայտարարութիւնները տարեկան չափով, օրով, յարկով, յարանձանով, գերմաներէն և օտարերէն:

ՄԵՍԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲԱՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Շաբաթուրդը երկրորդութիւնը: — Երեւոյ խմբագիրը: — Ներքին տեսութիւն: Աւտարական խմբագիր: Նախկին Բազմա: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Նախկին Պարսկաստանից: Արտաքին գաւառներ: Արտաքին լուրեր: — Խառն լուրեր: — Ֆէլիտոն (մասնագրութիւն): — Յայտարարութիւնը:

ՅԱՒԱԼԻ ԱՆՅՔ

„Կովկաս“ լրագրում կարգումներ, որ Շաբաթուրդ մէջ մի սաստիկ երկրաշարժութիւն եղաւ, որը պատճառեց նշանաւոր վնասներ:

Մանրամասն տեղեկութիւններ կհաղորդենք առանձնապէս:

ՄԱՍՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մի մասնաւոր նամակից մենք տեղեկանում ենք Շաբաթուրդ սոսկալի կործանման մասին յետագայ մասնաւորումները (որոնց համար պատասխանատու չենք): Երեւոյ մէջ, որ հայտնի էր, որ շաբաթուրդը երկրաշարժի շնորհիւ, հայ լրագրական ազդեցութեանը նոյնպէս, և նորա աւերակների տակ մնացել են մինչև 20 անձ: Մասնաւոր գիտնականները շատ վնասվել են:

Աւերակների քանակը մինչև այժմ մարդիկների հանած թիւը ասում են հասնում է մինչև 100:

Մենք մեզ պարտաւորութիւն ենք համարում մի տպագրական սխալ ուղղել. մեր անցեալ համարի ծանոթութեան մէջ, փոխառական թղթերի (բարաթների) վերաբերութեամբ: Մենք չպետք է ասէինք, որ փշաթուղ (կնիքով) բարաթների գործը:

ՄԱՍՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մայրենի լեզու, այլընտրանք և ընթերցարան մանկանց, յորինեաց ծխակաւ պարոնների համար Նիկողայոս Տէր Գալստիանց: Մասնաւոր, այլընտրանք: Տիֆլիս, 1870: Գինն է 20 կոպ:

Մայրենի լեզու, այլընտրանք և սկզբնական ընթերցարան մանուկների համար: Առաջին տարի: Աշխատասիրեց Նիկողայոս Տէր Անտոնիանց: Տիֆլիս, 1870:

Մեր պարբերական հրատարակութիւնների մէջ շատ անգամ խօսք է եղել մեր մանկավարժական գրականութեան աղքատութեան վրայ: Շաբաթուրդը են տուել օրինաւոր գաղափարների պակասութիւնը, և այդ պակասութեան առաջին առնելու համար՝ զանազան առաջարկութիւններ են եղել. ոմանք առաջարկեցին առանձին ընկերութիւն կազմել այդ նպատակի համար, ուրիշները մինչև անհամ ստորագրութիւն հաւաքողները եղան աշխատողներին և նուցա զրուածները հրատարակութիւնը ապահովեցին համար: Բայց այդ բոլոր գիտնական գիտնականները անորոշադրելի մնացին, և մեր ուսումնականների աշակերտները հարկադրուած են դեռ ևս կամ հին գրքերի վրայ զուգնելու կոտրել, և կամ ուսուցիչների գրաւոր դասերը օրինակելով ժամանակ կորցնել:

Սրանից չպետք է եզրակացնել թէ դասական

թիւնը, լրանում է փետրվարի 16-ին, այլ պետք է ասէինք որ նա լրանում է երեք ամսվայ միջոցում, սկսած այն օրից, երբ բարձրագոյն հրամանը (նոյեմբ. 16-ին հաստատված) հրատարակվեցաւ: (Տես „Կովկաս“ լրագիր, № 2. յունվարի 5).

Խնդրակոչ Խմբագիր

I.

Մի լրագիր խմբագիր լինել, — նշանակում է մի հասարակական պաշտոն յանձն առնել: Բայց մի հասարակական պաշտոն յանձն առնողը պիտի ծանօթ լինի հասարակութեանը. . . : Հասարակութիւնը պիտի իմանայ, արդե՞ք ընդունակ է այս ինչ կամ այն ինչ անձը մի հասարակական պաշտոն վարելու:

II.

Այն հասարակական պաշտոնները յանձնվում են, կամ հասարակութենից, կամ մի իշխանութենից այնպիսի անձերին, որոնք ընդունակ են համարվում այն պաշտոնները վարելու:

Կամ հասարակութիւնն է ընտրում մի մարդ, կամ իշխանութիւնն է նշանակում մի անձ: — Թէ առաջին, և թէ երկրորդ դէպքում մի պաշտոն յանձն առնող անձը, պիտի յայտնի լինի, որպէս ընդունակ և յարմար պաշտոնակատար:

III.

Ո՞վ է ընտրում մի լրագրի խմբագրութիւն, կամ նորա նշանակում: Ո՞վ է յանձնում մի մարդի հասարակութիւնը դաս-

տիարակելու իրաւունքը. . . : Ոչ ոք: — Խմբագիրը միշտ ինքնակոչ անձ է, ինքնակոչ հասարակական գործաւոր, հասարակութեան ինքնակոչ դաստիարակիչ:

IV.

Լաւ է, եթէ խմբագիրը արդէն առաջ յայտնի է եղել հասարակութեանը, որպէս ընդունակ գրող. . . : Լաւ է, եթէ խմբագրութիւն կազմող անդամները, յայտնվեցան գրականութեան որ և ինչ ճիշդ մէջ: Բայց եթէ այդ էլ չկայ. . . ո՞վ է տալիս հաւանութիւն ինքնակոչ մարդիկներին, հասարակութիւն դաստիարակելու իրաւունքը իրանց սեփականացնելու. . . :

V.

Մեր դարում առաքելներ և մարգարէներ չկան: Մեր դարը աշխատողների դար է: — Մարդիկ, որոնք հաւատում են իրանց բարձր կոչմանը, կամ ինչպէս ասվում է, իրանց գործունէութեան մէջ ուղեկից են համարում իրանց բարի աստղը, — այդպիսի մարդիկ ծիծաղելի են թւում տան և ինքնորոգ դարի համար: Այժմ հարկաւոր են մեզ այնպիսի մարդիկ, որոնք ոչ թէ երկնային ոգով շնչաւորված գային քարոզելու խաւարը փարատելու համար, — այլ մշակներ, որոնք աշխատելիս յարմարելով ժամանակակից պահանջներին:

VI.

Ծիծաղելի կլինէր այն մարդը, որ այն նպատակով սկսէր հրատարակել մի լրագիր, որ դաստիարակի ժողովուրդը: Այդպիսի մարդից ես կհարցնէի, արդե՞ք ո՞վ է իրաւունք տուել քեզ ժողովուրդի դաստիարակելու պաշտոնը սեփականացնելու. . . :

VII.

Հասարակութեան դաստիարակութիւնը, մենք ինքն հասարակութիւնից ենք սպասում — և ոչ թէ մի մասնաւոր մարդից:

Նիւյ յետոյ դառնալ է խոսակցութեան կրթութիւնը, որ զանազան հարցեր առաջարկուած են նոյնպէս ընդգրկում դաստիարակելու վրայ, որոնց աշակերտը պիտի պատասխանէ: Այժմից վերջը դրած է գրական կրթութիւնը դարձնել ընդգրկում բոլորի վրայ, թէ և հանգամանքները չենք ինչպէս հնդկական կրթութեանը մէջ խոստացած վայելչագրութեան օրինակները գինը գրել վերջին:

Տարակոչ չկայ որ պ. Տէր Գալստիանցի դիրքը ոչինչ նմանութիւն չունի այն այլընտրանքների հետ, որոնք սկսում են, յիշել, այդ — բայց ու, այդ, թէ, հա՛ւա՛րդ և աւարտութեան մէջ — տողներ անմիջապէս բաղդելով: Բայց իր միակերպութեամբ և միևնոյն բառերի ու նախադասութիւնների շարունակ կրկնութեամբ ձանձրութիւն է պատճառում մանուկներին, որոնք ինչպէս խաղերի, նոյնպէս և պարագայում մէջ փոփոխութիւն են սիրում:

Հեղինակը իր յառաջադրանքի առաջին երեսումը ասում է. „Կարծես չկարժանանալու մէջ աշակերտը ստանում է զանազան և բազմակողմանի տեղեկութիւններ և դիտութիւններ իւր շրջակայ — մարդկային կենաց մէջ գործածական և ամենահարկաւոր — առարկաների վրայ, որով և բացվում է (այսինքն բացվում են) նորա մտաւոր կարողութիւնները և ընդարձակվում է նորա գիտութեան և դատողութեան շրջանակը (ուզում է ասել չըրջանակ): Բայց գիտար թէ նա իր նպատակին հասնի այն միակերպ և շատ անգամ անհիմն նա-

Հասարակութեան մէջ կայ քնած գործութիւն, քնած մտաւոր ոյժեր, քնած հարստութիւն, մտաւոր անմշակ, հում նիւթ. . . :

Խմբագրի գործունէութիւնը հասարակական ասպարեզում պիտի նման լինի քնագետի գործունէութեանը, բնութեան հարստութիւնների հետազոտութեան ասպարեզում: VIII.

Քնագետը հետազոտում է մի երկիր: Նա սովորել է որոշել բնական պիտանի արդիւնքը անպէտք արդիւնքներից: Նա գիտէ դասաւորել իրանց տեսակի և ձևի համապատասխան թէ կենդանական, թէ բուսական կենսաբան երեւոյթները: Այս ինչ տեղը հետազոտելով, նա մէտալի մի նոր տեսակ է գտնում, այն ինչ հողի յատկութիւնը ընկնելով, նա վճռում է թէ նա յարմար կլինէր օգտակար բոյի այս ինչ, կամ այն ինչ տեսակը արդիւնքները: Մի ժայռի կազմող մասերը ընկնելով, նա հարուստ և թանկագին հանքերի հետք է նշմարում, կամ եղբայրական հանքային ջրերի, աղբիւրի ներկայութեանից, որ շրջակայքներում պիտի դանդաղ այն ջրերի մէջ լուծված միներալի հարուստ խաւերը. . . :

IX.

Ինչպէս բնութեան մէջ, այնպէս և հասարակութեան մէջ կայ քնած գործութիւն, քնած հարստութիւն, ինչպէս ասացի մտաւոր, անմշակ, հում նիւթ:

Գրագետից, լրագրի խմբագրից պիտի սպասեմք, որ նա հետազոտի հասարակական հողը, քննի նորան կազմող մասերը, դարձնի քնած մտաւոր գործութիւնը, յարուցանի մտաւոր հարուստ հանքերի արդիւնքները. . . :

X.

Ամօթ է այն խմբագրութեանը և խմբագրին, որ երկար ժամանակ հրատարակելով

խաղաղութիւններով, ինչպիսի են հետախնդր, իմ անունը արշակ ա: նրա անունը արամ ա: իմ աստի անունը մարիամ ա: մանիակի տատի ա: նունը շուշան ա: և այլն: Միայն 7-րդ կրթութիւնն ինչ, այսինքն ճիշդ գրել կէսից, սկսում են փոքր ինչ հետաքրքրական և նիւթ պարունակող նախադասութիւններ:

Աւելի հետաքրքրական և գործնական են երկրորդ կարգի կրթութիւնները, այսինքն խոսակցութիւնները: Բայց և այստեղ հեղինակը սխալի մէջ է ընկնում, շատ անգամ երկնային բերանը դնելով ամենատարակական հարցերի պատասխանները: Այսպէս օրինակի համար 13-րդ երեսում, „ինչին են ասում արա՛ւ“ նախադասութիւնից մինչև „Ուրեմն եթէ ձմեռը ձիւն չկայ և ցուրտ չլինի, աշնանացանին վնաս է“, — տասներկու, հարցից տասնի պատասխանը դրած է փակագծի մէջ: Խոստովանում ենք որ այս կերպով ոչ թէ սերկանների ըրտաւոր կարողութիւնները բաց ենք անում և նորա գիտութեան ու դատողութեան շրջանը բնորոշում ենք „այլ միջոց ենք տալիս նորան լիակատարի պէս պատրաստ նախադասութիւնների անգիր սերտելու:

Առ հասարակ մեր կարծիքով աւելի բաւ կըլինէր, եթէ հեղինակը յառաջադրանքի մէջ մի անգամ առանձին օրինակով բաւ բացատրէր ուսուցիչներին այս տեսակ կրթութիւնների եղանակը, փոխանակ իւրաքանչիւր ընթերցանութեան կրթութեան:

մի պարբերական գրված, չհարողացաւ զար-
թեցնել ընդունակութիւններ, իր չորս կողմը
կազմել տանգիւններ, կրթել գրողներ:

Ազորմեղի է այն օրագիրը, որը տասը տա-
րից աւելի հրատարակելով, չհարողացաւ
հետազոտել հասարակական հոգը և նորա
մտաւոր հանքերի խորքից, յարուցանել ինք-
նուրոյն արդիւններ, զարթեցնել ինքնու-
րոյն թիւնը:

XI.

Ուրեմն, լրացիր պիտի հետազոտիլ ինի
պիտանորապէս և ոչ թէ դաստիարակիլ:

Հաստ անգամ երևելի պարբերական հրա-
տարակութիւնների հիմնողները, եղիւն ան-
յայտ անձեր, ծանր, անհամ, անոճ, ան-
մարտիկ գրողներ... բայց ընդունակութիւն
են ունեցել ճանաչել մարդ, ճանաչել ծնող
տաղանդ, հետազոտել հասարակութեան մէջ
քննած հարստութիւն, շրջապատել իրանց
ընդունակ մարդիկներով, ուղղութիւն տալ
ամենքին, հասկացնել վերջապէս ամենքին
իրանց ընդունակութեան յարմարվող գրա-
կանական ստեղծվածի ձևը:

XII.

Աննշան ոտանուորներ ստեղծողին, խմբա-
գիրը դարձնումը վերապատական ձևին, — և
շատ անգամ նա, որ առաջ անցյալ էր և
ազդեցութիւն չունէր ընթերցողի վերայ,
գառնումը նշանաւոր բռնակալութիւն:

Միջակ արժողութեան գրամանրի, կո-
մէդիաների գրողը, դառնումը ուրիշ հան-
գամանքներին և շրջանին պատահելով, տա-
ղանդաւոր Ֆելիքստոնիստ կամ քաղաքական
պարսաւազրոց (պանֆիլտիստ)... և այլն:

XIII.

Խմբագիրը քարոզիչ է... քարոզչների
գարը անցաւ, խմբագիրը աշխատող է, հա-
սարակական երեւոյթների հետազոտիչ է:

Լրագիրը պիտի արտայայտի իր մէջ ժո-
ղովորդի պահանջները, պարթեցնի ընդու-
նակութիւնները, յարուցանի տաղանդները,
ծնի աշխատակիցները, հրաւիրի մտաւոր
գործունէութեան մասնակցութեանը ազդի
մէջ գանգոյ բոլոր հոգեւոր ոյժը...

Լրագիրը պիտի կրթի գրողները, որոնք
ժամանակով պիտի դառնան հասարակութեան
ամենօրեայ պահանջների արտայայտութեան
ներկայացուցիչները:

XIV.

Խմբագիրը պիտի կազմի խմբագրութիւն,
որտեղ աշխատէ միացնել մտաւոր ոյժ... որ
երբ ինքը կհեռանայ, կթողնէ ասպարէզը.
հասարակութիւնը կարողանայ ասել թէ
նորա գործունէութիւնը ապագիւն չմնաց,
որովհետեւ նա իրանից յետոյ մտաւոր զօրք
թողեց, որ սկսած ուղղութեամբ և անընդ-

թիւնից յետոյ երկու-երեք երես հարցեր դնելու, որ
զբի կէսից աւելի բռնում են: Այդ ժամանակ հե-
ղինակը կարող էր իր զբոյլը զարգացել ընթեր-
ցանութեան թեթիւ հատուածներով, ինչպէս որ ա-
րել է պ. Տէր Ղևոնդեանը, որով և իր աշխա-
տութիւնը աւելի զարգացաւ և օգտակար կըլի-
նէր երկխոսիչ համար:

Վերջապէս չենք հասկանում թէ ինչ մանկա-
վարական հիման վրայ զլրացրել տաւոր բաժան-
ում են մանր տաւորից ու զրբի վերջը դրած:

Լիզուի կողմից նորոգել պակասութիւններից ա-
ղատ չէ պ. Տէր Յակոբեանցի աշխատութիւնը:
Նոստակցութիւնն ժամանակը, ատում է նա, ուշ
գործնելու է և լեզուի մարտնչութեանը, ըստ որում
երկխոսի փոքր ժամանակից պէտք է ուսանի մա-
քուր լեզուով խօսիլ, ապա թէ ոչ մեծ ժամանակը
զոտար է նորա լեզուն ուղղել: Բայց նորա գիր-
քը աջակցի դատաւարական ձևերով լի է, որոնք վա-
ղուց արտաքսուած են ոչ միայն գրաւոր, այլ և
խօսուած լեզուից: Այսպէս են օրինակի համար
հետեւեալները. «ամա, տեսնում, բիձա, ալիք, ալ-
բուր, նաքա, ձուռ, ուր ալ, նա կամենում է զրի-
չը կարէ (կարի), և այլն: Այդ հակառակ երբեմն
աջակցի բառեր և միջն անգամ հորմոնի են գործ
դրած, որոնք ուղղակի գրաբարից առնուած են
և նոր լեզուի մէջ ամենեւին գործածելի չեն: Այս-
պէս են՝ «ոմն, արբայ, միոյն, մարդոյն, անհալ, ե-
կեալ, լեալ, համբարձեալ» և այլն:

Հատ աշխատանքով, պիտի շարունակէ լուսա-
ւորութեան համար պատեհազմելու:

ՆԵՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ ԹԻՖԼԻՍԻՄ:

XIII.

Թող ինձ ներուի մեր կեանքից անտեղա-
կան այնպիսի մի օրինակ բերելու, որ բո-
ւազական կերպով կարծես թէ բարկեցեց վա-
ճառականութեան գրութիւնը, բայց որ աշո-
ղակ և երկարատեւ ազդեցութիւն չունեցաւ
նորա վերա:

Երբ շինականների դրութեան վերաբերու-
թեամբ, վերանորոգութիւն մտցնեցաւ մեր
երկրում, կալվածատերերը ստացան վարձա-
տրութիւն իրանց ճորտերի անձնական ազա-
տութեան համար: Այդ նշանաւոր վարձա-
տրութիւնը հասաւ մեր երկրում մինչև 10
միլիոն ուրբի: Բայց մեզանում հակում
դէպի շաշուկութիւնը անշափ մեծէ, որ այդ
գումարը միակեցաւ երբ տարուայ միջո-
ցւոյ: Երբեք, ապրեցումի ապրանքների,
գանաղան զարդարանքների վաճառականու-
թիւնը, յանկարծ ծաղկեցաւ: Վաճառական-
ները հազիւ ժամանակ ունէին ապրանք բե-
րելու, տանտերերը հազիւ ժամանակ ունէին
աները և խանութները շինելու:

Վաճառականները, կարծելով որ վաճա-
ռականութեան այդ անբնական և եթէ կա-
րելի է ասել, անբնական դրութիւնը երկա-
րատեւ կլինի, բերեցին շատ ապրանքներ,
կապեցին պայմաններ, տուեցին փոխանակա-
գրեր (մանականդ Մոսկովյու): Բայց շու-
տով յուսահատվեցան, երբ տեսան, թէ կալ-
վածատերերը այլ ևս փող չունեն... :
Այն ժամանակ ապրանքները պահեստների
մէջ մնացին, վաճառականները սկսեցին իրանց
կողմից պարտքեր անելու:

XIV.

Վաճառականներից շատերը սկսեցին գործ
դնել յետագայ միջոցները: Դեղուք, մի վա-
ճառական, որ 3 տարի շարունակ առուտու-
րով էր պարտաւոր, կապած ունէր պայման-
ները թէ Մոսկովյի, թէ Նիժնի քաղաքի
առևտրական տների հետ, առնումը առաջ
ապրանքները նաղը փողով, յետոյ փոխա-
տուութեամբ, և վերջապէս պարտ էր մնում
մի նշանաւոր գումար: Նա այն ժամանակ
այլ ևս չէր գնում Մոսկովյի, չէր վճարում
իր պարտաւորութիւնները, բայց ուղարկելով
այն տեղ իր ընկերին, լուր էր տարածել տա-
լիս, թէ նա անկարող է վճարելու, (թէ նա
սեղանաբէկ է): Այդպիսի լուր տարածելուց
յետոյ, նա իր տուած փոխանակաւորը ինքն
առնումը իր ընկերի ձեռքով, վճարելով մի

Պ. Ն. Տէր Ղևոնդեանցի «Մայրենի լեզուն»
գալով, պէտք է խոստովանի, որ սա անհամա-
դրեալանց է պ. Տէր Յակոբեանցի աշխատութիւ-
նից:

Պ. Տէր Ղևոնդեանցի գիրքը բաղկանում է 97 ե-
րեսից և բաժանվում է երկու մաս: Առաջին մա-
սը, այսինքն բուն ալբերնարանը պարունակում է
իր մէջ զլրացրել մանր տաւորը սովորական դա-
տաւորութեամբ, յետոյ գալիս են զանազան կրթու-
թիւններ առանձին բառերից և փոքրիկ նախադա-
տութիւններից ալբերնից առած երկու կամ երեք
տառի վրայ: Այս կրթութիւնները նորանով են
զանադանվում պ. Տէր Յակոբեանցի կրթութիւն-
ներից, որ այնքան երկար, միակերպ, հետաքրք-
ւածարար չեն, բոլոր ալբերնարանը հազիւ 12 ե-
րես է բռնում: Միայն չենք հասկանում թէ ինչ
խորհուրդ ունի այս տեսակ կրթութիւնները դասի
բաժանելը: Մեր կարծիքով այդպիսի բաժանում-
ները կամայական են և ոչինչ մանկավարժական
օրէնքի վրայ հիմնուած չեն, որովհետեւ անկարելի
է աշակերտների ընդունակութեանը չափ և սահ-
ման դնել...

Պ. Տէր Ղևոնդեանցի աշխատութեան բոլոր ար-
ժանատրութիւնը երեսմ է երկրորդ մասի մէջ:
Այս մասում հեղինակը բոլորովին հետևել է Ու-
լիսակի ռուս մանկավարժի գրքին: Բոլոր ուղիւն
ասելով՝ մենք չենք հասկանում ստրկական, ան-
միտ նմանութիւն, այլ ինչպիսի հետեւողութիւն,

ուրբի տեղ 10 կամ 20 կոպէկ: Միւսները
առնելով այնտեղ այդ փոխանակաւորները, վե-
րադառնումէին Կովկաս և դատաւորանի ճա-
նապարհով պահանջումէին փոխանակաւորի
ամբողջ գումարը: Այդ ստիպեց մի քանիս-
ներին իրանց ճշմարիտ սեղանաբէկ յայտ-
նելու:

Փորձեցին և արտասահմանեան յարաբե-
րութիւններում մի և նոյն միջոցները գործ
դնելու, — բայց այն տեղ չաջողվեցաւ... :

Մենք չենք մեղադրում, — մենք հաստա-
տում ենք:

Պէտքէ հանգամանքների վերայ ուշադրու-
թիւն դարձնել: Մեր երկրին պակաս են,
օրինակ, ճանապարհները, որոնք կանոնաւոր
անտեսական յարաբերութիւնների համար
առաջին պայման են:

Կարելի է, օրինակ, իր առևտրական օ-
գոտների ճիշդ հասկացողութիւնը այն հա-
սարակութիւնից պահանջել, որի մէջ դեռ
ևս նոր է նշմարվում հասարակական կեանքի
և լուսաւորութեան թոթովումը:

Ա:

Կարելի է արդեօք մեղադրել առևտրական
դասը, որ ճշմութեամբ լուծւում է տալիս իր
դրամական պարտաւորութիւններին, որ նա
միշտ հաւատարիմ է իր տուած խօսքին առև-
տրական յարաբերութիւններում, — երբ ինքը
վաճառականութիւնը դեռ ևս նահապետական
գրութեան մէջն է, երբ փողերը դեռ ևս շուտ
չեն շրջում, երբ ներքին, ամենօրեայ առև-
տրական յարաբերութիւններում չընդ դրամը
ներկայացնող փոխանակաւորը դեռ ևս գոր-
ծարութեան մէջ յայտնի է, երբ առու-
տուրի համար փոխաւորութեան (կրե-
դիտ) աղբիւրը չըլայ, երբ նոր է ծագում
առևտրական բանի հիմնելու միտքը... :

Կարելի է մեղադրել տանտերերին, որ նորա
իրանց շինութիւններից չեն կամենում ձը-
մարիտ վաճառանոցները, առևտրական յարա-
բերութիւնների համար կենդանի կենդոն-
ները կազմել, որ նորա չեն ձգտում բար-
ձրացնել ազնւացնել առուտուրը
այդ նպատակին հասնելու համար:

XVI.

Ես լուծում, որ առևտրական դասը մե-
ղադրումէ տանտերերին, թէ նորա կամայ-
կանութեամբ են վարվում, ամեն մի վաճա-
ռականի հետ առանձնապէս... բայց և տան-
տերերն էլ իրականաբար իրաւունք ունին ասե-
լու, թէ վաճառականները շատ անգամ կա-
մայականութեան ապացոյցներ են տալիս:

Այդպիսի անյաջող յարաբերութիւնների
հետևանքը ինչէ, անբաւականութիւն, և
ուրեմն անվերջանալի պրօցեսներ: Գիտու-
թեան համար, որը միշտ աշխատումէ ճիշդ

հիմնուած մանկավարժական կանոնների վրայ, այ-
սինքն այն ամէն յօդուածները, որոնք համապա-
տասխանում են մանկավարժութեան ընդհանուր
պահանջներին, հեղինակը սեպականել է Ու-
լիսակից, իսկ Ռուսաց կեանքի վերաբերեալ յօդ-
ուածները լայն է թողել և նոյա տեղ լրացրել է
այնպիսի յօդուածներով, որոնց նիւթը մեր կեան-
քից առնուած է:

Առհասարակ ընթերցարանը շատ բազմակողմա-
նի ու օգտակար տեղեկութիւններ է հաղորդում
մանուկներին: Ուլիսակու գրքին անձնաօթ ընթեր-
ցողին մի փոքրիկ հասկացողութիւն տալու համար,
ի՞նչնք հարկանցի այս տեսակ պարագմունքներից
մինը պ. Տէր Ղևոնդեանցի գրքից, դիցուք 16-դ
համարը, «Մարդիկ, կենդանիներ, բոյսեր և հան-
քեր» անունով: Առաջ դրած են մարդկանց ա-
նունները իրանց կոչման ու պարագմունքներով,
յետոյ կենդանիների, բոյսերի և հանքերի անուն-
ները: Յետոյ այդ առարկաների յարմար առաձեռն
և մի հանելուկ մարդու հասակի երեք զլրատու
ժամանակների վրայ, և ամենից վերջը մի հատ-
ուած (Արջի թաթը) կէս արձակ և կէս ոտանա-
ւոր: Քսանիբորդ համարից խառնվում է մի նոր
տեսակ կրթութիւն, որ շատ օգնում է երկրանց
մտաւոր կարողութիւնները զարգացնելու: Ուսու-
ցիչը հարցնում է. «Մորենի թուի է, իսկ կաղ-
նին... Ոչխարը բնութան անասուն է, իսկ աղ-
ուէսը... կամ կացնով կարում են, իսկ սղոցով... :

տեղեկութիւններից եղաւփակի մի հասարա-
կական երևոյթի մասին, դիտութեան հա-
մար հետաքրքիր կլինէր և այդ նիւթի մա-
սին ճիշդ թուանշանները:

Մեր քաղաքի առուտուրի մասին ճիշդ
հասկացողութիւն ունենալու համար, հետա-
քրքիր կլինէր վեճակաւորական տեղեկութիւն-
ներ ունենալ, թէ որքան մեծ է տանտերերի
և վաճառականների մէջ պրօցեսների տարե-
կան թիւը քաղաքում:

XVII.

Կամայականութիւնը դժուար է հեռաց-
նել, — այն է մոցնելով առևտրական դասի մէջ
ընկերակցութեան ոգի:

Ես ասացի բարձրացնել, ազնւացնել առու-
տուրը:

Ինչ միջոցով:

Փոխադարձ պատասխանատուութեան սկզբի
միջոցով:

XVIII.

Փոխադարձ պատասխանատուութեան սկիզբը
կարող է ամենաբարեբար ազդեցութիւն ու-
նենալ առևտրական իւրաքանչիւր յարաբե-
րութեան վերայ:

Թիֆլիզի առանձնութիւններից կարող են
համարվել քանի մի առևտրական մեծ շինու-
թիւնները, որոնք ժամանակով պիտի կանո-
նաւոր առուտուրի կենդոններ դառնան:

Պիտի և այս շինութիւնների վերաբերու-
թեամբ նմանապէս փոխադարձ պատասխա-
նատուութեան սկզբը մոցնել:

Երբ այդպիսի մի շինութիւն մոցնումէ
մի վաճառական, որը բացառութեամբ ոչ
գումար ունի, ոչ անուն, ոչ ևս առևտրական
գործերի մէջ հարկաւոր ազնւութիւնը, —
մի՞թէ նա առևտրական շինութեան մէջ իր
ներկայութեամբ չէ մնասում մնացած վա-
ճառականների բարի անունին, չէ մնասում
ուրեմն նոյա առուտուրի ընթացքի աջողու-
թեամբ: Այս և այդպիսի դէպքում, առև-
տրական դասը պիտի իրաւունք ունենայ ձայն
տալ շինութեան մէջ այդպիսի վաճառական-
ների մոցնելու դէմ:

Բայց միւս կողմից մի՞թէ բոլոր վաճա-
ռականների անունին այդպիսի մի շինութեան
մէջ չէ մնասում նոցանից մինի անագիւ-
վարմունքը տանտերի դէմ: Եւ այդ դէպ-
քում նորա պիտի նմանապէս հասկանան
իրանց պարտաւորութիւնը և իրանց օգուտը,
պաշտպանել տանտերին իրանց ընկերներից
մինի կամայականութեան դէմ:

XIX.

Ուրիշ օրինակ. եթէ մի վաճառականի
անարդար վարմունքը տանտերի դէմ ծա-
գում է ոչ թէ կամայականութիւնից, կամ
ազնւութեան սկզբից, — այլ հետևանք է դժ-

ինչ են անում ասեղով... գրքով... արօղով... ցա-
քանով... գերանդով... և այլն:

Պ. Տէր Ղևոնդեանի լեզուն կենդանի ու բնա-
կան է թէ արձակ և թէ ոտանաւոր յօդուածնե-
րում, այնպէս որ թարգմանութիւնը սեպական
գրութեանց չէ կարելի զանազանել: Պատահում են
երբեմն մի քանի սխալներ, որոնք աւելի անուշա-
ղորութիւնից առաջ եկած ենք համարում: Այսպէս
գտնում ենք գործ դրած «իննձորի, տանձի, կեռա-
սի», փոխանակ «իննձորի, տանձի, կեռասնի».
բայց ինչ մէջ, «բացուց, զարթեց», փոխանակ
բացուցաւ, զարթեցաւ ընդհանրացած ձևերի:

Բոլոր սրտով ցանկանում ենք որ պ. Տէր Ղևոն-
դեանի «Մայրենի լեզուն» տարածուի ու մեր ծիա-
կան ուսումնարանների համար զպլոցական զորք
դառնայ: Միայն եթէ հեղինակին յաջողի իր գե-
ղեցիկ աշխատութիւնը երկրորդ անգամ հրատա-
րակել պատկերազարդ և վաղիչազգրութեան օրի-
նակով, ինչպէս որ խոստանում է, խորհուրդ ենք
տալիս նորան, որ աւելի բաւաւորութիւն դարձ-
նէ ուղղագրութեանը. համարեա երես չկայ նորա
գրքի մէջ, որ սպաղարական սխալներից աղատ լի-
նի, և այս շատ մեծ պակասութիւն է, մանաւանդ
սկզբնական դասաղբի համար:

Մի ծխփղիբ ինձ վերայ, հըըմայր, թէ ես զոր
եմ գրել Պօղոս առաքեալի կեղծաւորութիւնը
ինչ պէտք էր արած: Երեսկայրի ճանապարհորդ
գլովաւոր զանաղան բարբարոս ցեղերի մէջ, եւ ի
չորս կողմում սպառնումէր ահ, զարծարանք
մահ...:

Ես հարցոյցի կարալանի մեծաւորին, միթէ այ
կողմերը անտէր են թողութեւ տերութիւնից մի
կառավարող չունի, որ այլոսն բաղմացիկ
առաջալիները: Նա տոտոտախանայ, թէ Ա...խան
կառավարութեան տակ են այդ երկիրները: Ս
կրկնեցի իմ հարցը. — քնշու Ա...խանը չէ դնու

